ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2021/54

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հունիսի 2021 թ. N 54

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝	«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ /ՀՊՏՀ/
Գործունեության հասցեն՝	ՀՀ ք. Երևան, Նալբանդյան 128-130 ՀՀ ք. Երևան, Պարույր Սևակ 77
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝	**ինստիտուցիոնալ հավատարմագրում, 4 տարի ժամկետով՝ 21.05.2015թ.- 21.05.2019թ**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2021 թվականի հունիսի 19-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՀՊՏՀ, Համալսարան) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝	14 հունիսի 2018թ.
ինքնավերլուծության ներկայացում՝	13 մայիսի 2019թ.
փորձագիտական այցի իրականացում՝	7-12 հոկտեմբերի 2019թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝	7 հունիսի 2021թ.
թերությունների վերացման ծրագրի ներկայացում՝	11 հունիսի 2021թ.

«Հայաստանի պետական տնտեսական համալսարան» ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից **«Կառավարում և վարչարարություն», «Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ», «Հետազոտություն և զարգացում», «Որակի ներքին ապահովման համակարգ»** չափանիշները գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՀՊՏՀ-ի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ բուհի դիտողություններն ու առաջարկությունները, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, բուհի կողմից տրամադրված տեղեկանքն իրականացվող աշխատանքների վերաբերյալ, լսելով փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ՀՊՏՀ-ի ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

ՀՊՏՀ-ն 2014 թվականին անցել է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց և, հաշվի առնելով գործընթացի շրջանակում ստացված խորհրդատվությունները, կազմել է բարելավման գործողությունների ծրագիր:

Համալսարանը մի շարք ոլորտներում իրականացրել է բարելավմանը միտված փոփոխություններ, սակայն նախորդ հավատարմագրման գործընթացի բարելավման պլանով նախատեսված գործողությունների մի մասը, որոնք վերաբերում են հատկապես ՌԾ նպատակների, ՀՊՏՀ-ում ընթացող գործընթացների արդյունավետության գնահատման ցուցիչների և մեխանիզմների մշակմանը, ՊԴ անձնակազմի ընտրության մեխանիզմների կիրառմանը և այլ գործընթացներին, չի իրականացվել:

1. ***ՀՊՏՀ-ը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում:***

Նախորդ հավատարմագրումից հետո ՄԿԾ-ներն արմատապես բարեփոխվել են և իրենց բովանդակությամբ ապահովում են արդի, գործնական հմտություններով, ՈԱԾ-ի և գործատուների պահանջներին համապատասխան շրջանավարտների պատրաստումը: ՄԿԾ-ները մշակելիս հիմնվել են արտասահմանյան մի շարք համալսարանների փորձին:

Այնուամենայնիվ Համալսրանը դեռևս չունի ՄԿԾ-ների մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման, ինչպես նաև դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները սահմանված վերջնարդյունքներին համապատասխանեցնելու քաղաքականություն, թեև վերջինիս ուղղությամբ որոշակի քայլեր այժմ իրականացվում են:

Նյութատեխնիկական հագեցվածությունը նպաստում է կադրերի պատրաստմանը:

Սակայն ՊԴ կազմի առումով առկա են խնդիրներ՝ շատ հարցեր դեռևս շարունակում են մնալ պլանավորման փուլում, իսկ մշակված նոր կանոնակարգերը դեռ նախագծի կարգավիճակում են և դեռևս չեն կիրառվում, բացի այդ նախորդ հավատարմագրումից հետո կազմված բարելավման ծրագրի տվյալ ոլորտին վերաբերող գործողությունների զգալի մասը չեն իրականացվել:

2. ***Կառավարման և որակի ապահովման համակարգերը հիմնականում աջակցում են որակավորումների շնորհման արժանահավատության բարելավմանը***

ՀՊՏՀ-ի կառավարման համակարգում վերջին տարիների հաճախակի փոփոխությունները անդրադարձել են ռազմավարական կառավարման վրա, ղեկավար կազմի փոփոխությունը բերել է զարգացման առաջնահերթ ուղղությունների փոփոխության, ինչի արդյունքում բարելավման պլանի իրականացումն ամբողջական չէ:
ՄՈՒՀ-ն ունի վերաձևակերպված առաքելություն, գործունեության առաջնահերթությունները սահմանող 2018-2022 թթ. Ռազմավարական ծրագիրը, որը հանդիսանում է 2016-2020 թթ. ռազմավարական ծրագրի լրամշակված և վերանայված տարբերակը, հստակեցնում է հաստատության ռազմավարական նպատակները, գործունեության առաջնահերթությունները՝ շեշտադրելով գործունեության կիրառական, հետազոտական և միջազգայնացման բաղադրիչները: Սակայն առկա չեն հստակ սահմանված հիմնական կատարողական ցուցանիշներ, մինչդեռ առկա առաջընթացի գնահատման առանցգային ցուցիչները (KPI) գործում են միայն ՀՊՏՀ առանձին ստորաբաժանումների մակարդակով:
ՀՊՏՀ-ի կառավարման համակարգում առկա է լիազորությունների ոչ հստակ բաշխում, կառավարման համակարգի բարելավման գործընթացներին արտաքին շահակիցները ներգրավված չեն:
Դեռևս արդյունավետ չեն գործում տվյալների հավաքագրման մեխանիզմները, չկան պլանավորման համակարգի միջնաժամկետ և ռիսկերի գնահատման բաղադրիչները, լիարժեք չի իրականացվում կառավարման որակի ապահովման սկզբունքը / ՊԻԳԲ/:
Հաշվետվությունները չեն կազմվել ռազմավարական ծրագրի հիման վրա և միայն այժմ է փորձ արվում վերանայել հաշվետվողականությունը:
Որակի ապահովման համակարգի ապակենտրոնացումը բերել է որոշակի խնդիրների՝ որակի ապահովման կենտրոնի աշխատանքների կարևորության նվազման: Ինչը ներկայումս փորձ է արվում վերափոխել:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն:***

ՄՈՒՀ-ում առկա հետազոտական միջավայրը դեռ չի ապահովում կիրառական հետազոտության բուհի կարգավիճակը: ‹‹Ամբերդ›› հետազոտական ուղեային կենտրոնը դեռ ամբողջությամբ չի ապահովում հետազոտական միջավայրի առկայությունը ՄՈՒՀ-ում:
Ինստիտուցիոնալ հետազոտական ռազմավարություն, կարճաժամկետ, միջնաժամկետ պլանավորումներով, իրականացման ժամանակացույցով հաշվետու ժամանակահատվածում չի եղել, թեև այս ուղղությամբ որոշակի աշխատանքներ տարվել են , մասնավորապես ‹‹Ամբերդ›› հետազոտական կենտրոնի և ամբիոնների որոշ աշխատակիցների կողմից: Դրանցում ուսանողների ներգրավածությունը եղել է անբավարար:
Վերջին տարիներին բուհում զարգացել է ազգային և միջազգային գործընկերների հետ համագործակցությունը: Դա են վկայում շարժունության ծրագրերին

ուսանողների և դասախոսների մասնակցության թվի, ինչպես նաև համագործակցության համաձայնագրերի թվի աճը: Սակայն արտասահմանցի ուսանողների ներհոսքը դեռևս անբավարար է:
Միջազգայնացման քայլերը որոշակի դրական արդյունք են տվել, մասնավորապես կրթական ծրագրերի բարելավման համար իրականացված բենչմարքինգի արդյունքում:
ՀՊՏՀ-ում իրականացվում են ոչ պարբերական և ոչ լիարժեք հարցումներ, որոնց միջոցով մասնակի վեր են հանվել ներքին շահակիցներին առնչվող խնդիրները, սակայն արտաքին շահակիցների հետ հետադարձ կապը հաշվետու ժամանակում եղել է անբավարար:

4. *Առկա* են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:

5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ՀՊՏՀ-ի կողմից ներկայացված ծրագիրը հիմնականում իրատեսական է: Թեև ոչ բոլոր խորհրդավտություններն են լիարժեք ընդգրկվել բարելավման պլանում, և գրեթե ոչ մի նպատակի համար հստակ նշված չէ բյուջեի հատկացումներ, այնուամենայնիվ պլանավորվածի իրականացումը կբերի էական որակական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով.
   - **«Կառավարում և վարչարարություն», «Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ», «Հետազոտություն և զարգացում», «Որակի ապահովման ներքին համակարգ»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը,
   - բուհի կողմից իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման առաջընթացի ցուցիչների չափելիության հստակեցման անհրաժեշտությունը,
   - բուհի կողմից իրականացվող գործընթացների իրականացման և գնահատման համար նախանշված ժամկետների և նախատեսվող ֆինանսական միջոցների չափի հստակեցման անհրաժեշտությունը:
3. Հատուկ ուշադրություն դարձնել.
   - կառավարման համակարգում լիազորությունների հստակ բաշխմանը, կառավարման համակարգի բարելավման գործընթացներին արտաքին շահակիցները ներգրավմանը,
   - արդյունքահեն կառավարման համակարգի բարելավմանը,

- վելուծությունների, հստակ քանակական և որակական տվյալների վրա հիմնված հաշվետվությունների իրականացմանը,
- հետազոտությունների որակը չափելու սկզբունքների ձևավորմանը, ուսումնառության և հետազոտության կապի ամրապնդմանը,
- հետազոտական գերակայությունների վերհանմանը, ռազմավարության ձևավորմանը:

4. Կազմակերպել ՀՊՏՀ-ում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի ներքին աուդիտ արտաքին փորձագետների ներգրավմամբ:
5. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով ակադեմիայի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ՀՊՏՀ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2021 թ. հունիսի 19
ք.Երևան